

Տարածաշրջանում անվտանգային իրավիճակի հնարավոր փոփոխություններն Ադրբեջանի եվ Թուրքիայի միջև՝ տնտեսական համագործակցության խորացման համատեքստում¹

Հարությունյան Գ. Է.,

տ.գ.թ., դոցենտ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետ (Երևան, Հայաստան)
gharoutyunyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Թուրքիա, Ադրբեջան, տնտեսական համագործակցություն, կորոնավիրուսային համավարակ, անվտանգային սպառնալիքներ, ռազմարդյունաբերություն, աշխարհաքաղաքական իրավիճակ, էներգետիկ ոլորտ, տրանսպորտային ենթակառուցվածքներ, բարձր տեխնոլոգիական ոլորտ

Возможные изменения в региональной безопасности в контексте углубления экономического сотрудничества между Азербайджаном и Турцией

Арутюнян Г. Э.

кандидат экономических наук, доцент,

*Руководитель Группы стратегических игр и моделирования,
Национальный исследовательский университет обороны МО РА (Ереван, Армения)*
gharoutyunyan@gmail.com

Аннотация. Военная эскалация на азербайджано-арцахской границе в апреле 2016 года, а также боевые действия на армяно-азербайджанской границе в июле 2020 года показывают, что между вооруженными силами стран региона образовался некий дисбаланс, который может привести к эскалации конфликта, и возможно - к войны. Такое развитие ситуации становится более очевидным, если принять во внимание недавние коррективы в геополитических позициях России и Турции, которые имеют большое влияние в регионе. В данном исследовании это предположение обсуждается в контексте «большой» экономической политики, которая проводится в регионе Азербайджаном и Турцией совместно. В статье рассматриваются вопросы возможного влияния углубления экономических отношений между Азербайджаном и Турцией на геополитические реалии в регионе. В частности, были оценены возможные угрозы безопасности Армении.

Ключевые слова: Турция, Азербайджан, экономическое сотрудничество, пандемия коронавируса, угрозы безопасности, оборонная промышленность, геополитическая ситуация, энергетическая сфера, транспортные инфраструктуры, сфера высоких технологий.

Possible Changes in Regional Security in the Framework of Deepening Economic Cooperation Between Azerbaijan and Turkey

Harutyunyan G. E.

*PhD in Economics, Associate Professor, Head of Strategic Gaming and Modeling Group,
National Defense Research University, Ministry of Defense, RA (Yerevan, Armenia)*
gharoutyunyan@gmail.com

Abstract. The escalation of tension on the Azerbaijan-Artsakh border in April 2016, as well as the hostilities on the Armenia-Azerbaijan border in July 2020, show that a certain imbalance has established between armed forces of the region's countries, which can lead to the conflict escalation and possibly – to the war. Such a development of the situation becomes more obvious if we take into account the recent adjustments in the geopolitical positions of Russia and Turkey, which have a great influence in the region. In this study, this assumption is discussed in the context of the "grand" economic policy, which is carried out by Azerbaijan and Turkey jointly. The article examines the possible impact of deepening economic relations between Azerbaijan and Turkey on geopolitical realities in the region. In particular, the possible threats to the security of Armenia were assessed.

Keywords: Turkey, Azerbaijan, economic cooperation, coronavirus pandemic, security threats, defense industry, geopolitical situation, energy sector, transport infrastructures, high technologies.

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ **19T-5B12** ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Նախարան

Թուրքիա-Ադրբեջան տնտեսական համագործակցությունն առանցքային նշանակություն ունի այս երկու երկրների համար, ընդամին հիմնվելով ոչ միայն տնտեսական պրագմատիզմի վրա, այլ նաև՝ «հուզական կողմնորոշմամբ» (emotionnaly-based) հարաբերությունների զարգացման տրամաբանության [2]: Մակայն երկուստեք նպատակահարմար հարաբերությունների խորացումն ընդհուպ մինչև «ռազմավարական» ուն(եր)ի նաև հստակ աշխարհաքաղաքական հիմնապատճառներ թե՛ Թուրքիայի և թե՛ Ադրբեջանի համար: Թուրքիայի տեսանկյունից դրանք հանգում են հետևյալին. սահմանափակել Ռուսաստանի աճող ազդեցությունը տարածաշրջանում, նվազեցնել Իրանի իսլամական քարոզչության ազդեցությունն Ադրբեջանում, խորացնել ազգային-էթնիկ կապերն Ադրբեջանի հետ, ինչը լրացուցիչ հնարավորություն կտա տնտեսական մեծ շահավետություն ստանալու այդ երկրի աճիաջրածնային ռեսուրսների շահագործումից [1]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա Թուրքիան, ըստ էության, այն խարխիսն էր, որի վրա Ադրբեջանը փորձեց կառուցել հայադրբեջանական պատերազմում պարտված երկրի ապագան, երբեմն նույնիսկ վիճելի հարցադրում առաջադրելով, թե արդյո՞ք ինչն ավելի մեծ դեր խաղաց հետպատերազմյան Ադրբեջանի զարգացման համար՝ աճիաջրածնային հարուստ պաշարները, թե Թուրքիայի հետ բարեկամական գործընկերությունը:

Սույն հետազոտությունում վերլուծելու ենք Ադրբեջանի և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունների խորացման հնարավոր ազդեցությունը տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրողությունների վրա և փորձելու ենք գնահատել Հայաստանի համար հնարավոր անվտանգային սպառնալիքները:

Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված տնտեսական իրավիճակն Ադրբեջանում

Ադրբեջանի պաշտոնական վիճակագրության տվյալները փաստում են, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված երկիրը մեծ դժվարությունների է բախվել մի կողմից պայմանավորված հակահամաճարակային միջոցառումների իրականացմամբ, մյուս կողմից՝ նավթի համաշխարհային գների անկմամբ: Ընթացիկ տարվա առաջին հինգ ամիսների ընթացքում ադրբեջանական ՀՆԱ-ի անկումը կազմել է 1,7% [6]: Առևտրային հաշվեկշիռը դեֆիցիտ արձանագրվել է բացասական սալոդ: Վերջին անգամ առևտրային հաշվեկշիռը դեֆիցիտ արձանագրվել էր 2015-2016 թթ՝ դարձյալ համախարհային շուկայում նավթի գների էական անկման պայմաններում: Արժույթի միջազգային հիմնադրամի

կանխատեսումների համաձայն 2020 թվականին առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը կկազմի 3,3 մլրդ դոլար, այն դեպքում, երբ 2019 թվականին այն 4,4 մլրդ դոլար ավելցուկ ուներ [7]: Նկատենք, որ ընթացիկ տարվա բյուջեի նախագիծը պլանավորվել էր 2,5 մլրդ դոլար ավելցուկով: Տարբեր գնահատականներով մեկ բարել նավթի գնի անկումը 1 դոլարով Ադրբեջանի ընթացիկ հաշվի վրա թողնում է տարեկան 250 մլն դոլարի բացասական ազդեցություն: Նախորդ տարի նավթի միջազգային գինը մեկ բարելի համար կազմում էր 64,4 դոլար [8]: Այս տարի առաջին ու երկրորդ եռամսյակներում այն միջինում տատանվել է 20-25 դոլարի շրջանակներում, և միայն երրորդ եռամսյակում է կանխատեսվում դրա աճ մինչև 30-33 դոլար:

Համավարակով պայմանավորված համաճարակային միջոցառումների արդյունքում Ադրբեջանը յուրաքանչյուր օր կորցրել է 120-150 մլն մանաթ կամ 70-88 մլն դոլար [9]: Չգալի չափերի էր հասել նաև գործազրկությունը: Մարտի մեկի դրությամբ երկրում առկա էր 90 000 -ից ավելի գործազուրկ: Պաշտոնական տվյալներից դարձյալ կարելի է ենթադրել, որ գործազրկության համար տրված նպաստներից օգտվել է ավելի քան 600 000 քաղաքացի: Ինչը ևս մեկ անգամ ցույց է տվել, թե որքան սխալ է ներկայացված եղել Ադրբեջանում վիճակագրությունը, և որ իրականում Ադրբեջանում բավական շատ տնտեսական խնդիրներ կան: Ստացվում է, որ համավարակի պայմաններում Ադրբեջանը ստիպված է եղել բյուջետային մուտքերի էական կրճատման պայմաններում նաև զգալի ծախսեր կատարել համավարակի հաղթահարման համար: Նավթի գների անկման և արտահանման ծավալների կրճատման ֆոնին Ադրբեջանում կտրուկ կրճատվեց նաև տնտեսության վարկավորումը, քանի որ հակառակ դեպքում տեղական արժույթը անդառնալիորեն կարժեզրկվեր: Նկատենք, որ բազմաթիվ այլ երկրներում ԿԲ-երը հակառակը խթանում էին վարկավորումը՝ տնտեսության հետընթացը կանխելու համար: Ըստ փորձագետների, նման պայմաններում Ադրբեջանի միակ «անվտանգության բարածիկը» մնում է «Նավթային ֆոնդը»՝ իր 40 մլրդ դոլար կուտակումներով: Մակայն, առավել մասնագիտացված վերլուծությունները, ինչպիսին է օրինակ, «Ստանդարդ Էնդ Փուրզ» ռեյտինգային գործակալության գնահատականները, երկարաժամկետ հեռանկարում Ադրբեջանի ռեյտինգը մնում է «BB+/B» կայուն, որը համավարակի ֆոնին Ադրբեջանին դասում է ամենաուժեղ պետությունների շարքում: Նման գնահատականի համար հիմք է հանդիսացել երկրի արտարժույթային պահուստների, պետական լիկվիդային ակտիվների մեծ ծավալը, որը նրան թույլ կտա

դիմակայել արտաքին շոկերին: 2021 թվականին գործակալությունը կանխատեսում է նաև անխաջրածնային ռեսուրսների միջազգային գների աճ նույնիսկ ավելի բարձր, քանի նախակորոնավիրուսային ժամանակահատվածում էր [4]: Ադրբեջանի համար առավել լավատեսական, քան հարավկովկասյան այլ պետությունների համար, սցենար է կանխատեսել նաև Համաշխարհային բանկը: Այսպես օրինակ, Վրաստանում կանխատեսվում է 5,1% անկում, Հայաստանում՝ 2,8%, իսկ Ադրբեջանում՝ ընդամենը՝ 2,6% [13]:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ կորոնավիրուսային համավարակը ևս մեկ անգամ Ադրբեջանի իշխանությունների ուշադրությունը հրավիրեց տնտեսության թույլ կառուցվածքի վրա, որի կենսունակությունը 90%-ով պայմանավորված նավթագազային ոլորտից: Տնտեսության դիվերսիֆիկացման պահանջն առավել, քան հրատապ է և առաջին ուղղությունը, որը երկիրը ցանկանում է զարգացնել այդ թվում նաև՝ «Նավթային ֆոնդի հաշվին» դա բարձրտեխնոլոգիական ոլորտն է:

Մյուս կողմից Ադրբեջանի պետական ու գիտական շրջանակներում ավելի հաճախ են սկսել խոսել այն մասին, որ կորոնավիրուսով պայմանավորված նոր իրողությունները ցույց են տալիս, որ աշխարհը պետք է ապագութային զարգացվի, բայց փոխարենը պետք է ստեղծվեն նոր տնտեսական ու ֆինանսական ինտեգրացիոն կառույցներ հիմնական արտաքին առևտրային գործընկերների հետ՝ հատկապես նավթագազային ոլորտում, ընդ որում, որպես հավանական գործընկերներ նշվում է առավելապես Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի հետ համագործակցության կարևորությունը: Հիշեցնենք, որ վերջերս Ռուսաստանը և Ադրբեջանը սկսել են համագործակցել նաև ՆԱԵԿ+ շրջանակներում:

Մեր գնահատմամբ, կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը Ադրբեջանում, ինչպես նաև անխաջրածնային ռեսուրսների միջազգային շուկաներում գնազոյացման վերաբերյալ հետագա կանխատեսումները իրենց էական ազդեցությունը չեն կարող ունենալ տարածաշրջանում անվտանգային միջավայրի փոփոխության վրա: Այնուամենայնիվ, հարավկովկասյան տարածաշրջանը տարբեր ոլորտներում իրադարձությունների զարգացման առումով ամենահակասական տարածաշրջաններից մեկն է, որտեղ հանգուցված են մի քանի խոշոր աշխարհաքաղաքական ակտորների շահեր: Արդյունքում տարածաշրջանում առկա չլուծված հակամարտությունները (խոսքը մասնավորապես վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը) չեն ստանալու անհրաժեշտ հազուցալուծումը, քանի դեռ

աշխարհաքաղաքական խոշոր ակտորները վերջնականապես չեն համադրել իրենց հնարավոր օգուտներն ու կորուստները իրադարձությունների զարգացման այս կամ այն սցենարի պարագայում: Այնուհաստի, որ Ադրբեջանի համար, որն, ի դեպ, միջազգային հանրության կողմից դիտվում է որպես հակամարտությունից տուժած կողմ, ստատուս քվոյի պահպանումը տևական ժամանակ ձեռնտու էր, քանի որ ժամանակ էր պետք ռազմական, քաղաքական և տնտեսական առումով այնքան հզորանալու, որ հնարավոր լինի ռևանշի գնալ առանց էական կորուստների: Թվում է՝ ստատուս քվոյի պահպանումը ձեռնտու էր և շարունակում է այդպիսին մնալ նաև Հայաստանի համար, որը չնայած արտաքին աշխարհի հետ հաղորդակցության համար ընդամենը 250 կմ բաց սահմանի (ընդհանուր՝ 1500 կմ-ից), այնուամենայնիվ գտել էր աճող տնտեսության իր բանաձևը (հիշեցնենք, որ մինչև 2008-2009 թթ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանի տնտեսությունն աճում էր երկնիչ ցուցանիշներով): Սակայն 2016 թվականի ապրիլին ադրբեջանա-արցախյան սահմանին ռազմական էսկալացիան, ինչպես նաև՝ 2020 թվականի հուլիսին հայ-ադրբեջանական սահմանին ռազմական գործողությունները վկայում են, որ տարածաշրջանում տեղի է ունեցել երկրների ռազմական հոգորությունների միջև հավասարակշռության որոշակի խախտումը, որը, ցավոք, տանելու է հակամարտության սրման և հնարավոր է նաև՝ նոր պատերազմի: Իրադրության նման զարգացումն ավելի ակնառու է դառնում, եթե հաշվի ենք առնում նաև տարածաշրջանում մեծ ազդեցություն ունեցող Ռուսաստանի և Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքորոշումների վերջին հստակեցումները:

Սակայն սույն հետազոտությունում այս կանխավարկածը դիտարկելու ենք տարածաշրջանում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից համատեղ իրականացվող «մեծ» տնտեսական քաղաքականության համատեքստում:

Տարածաշրջանում անդրազգային խոշոր տնտեսական նախագծերի զարգացման միտումները և դրանց հնարավոր ազդեցությունը Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության վրա դիտարկելու ենք հետևյալ հիմնական ուղղություններով.

- ✓ համագործակցություն էներգետիկ ոլորտում,
- ✓ համագործակցություն տրանսպորտային ոլորտում,
- ✓ համագործակցություն նոր տեխնոլոգիական,
- ✓ համագործակցություն ռազմարդյունաբերական ոլորտում:

Համագործակցություն էներգետիկ ոլորտում

2020 թվականի առաջին եռամսյակի տվյալներով էապես փոխվել է Թուրքիայի՝ բնական

գագի ներմուծման կառուցվածքը: EPDK (Թուրքիայի էներգետիկ շուկայի կարգավորիչի) տվյալներով Ռուսաստանը նախորդ տարվա համեմատ առաջին տեղից իջել է մինչև հինգերորդ տեղ՝ առաջ թողնելով Ադրբեջանին (23.5%), Իրանին (14.2%), Ալժիրին (20%) և Կատարին (13.7%): Փաստն ինքնին զարմանալի չէ, քանի որ հայտնի է, որ Թուրքիայի համար ադրբեջանական գազը շատ ավելի էժան է նստում, քան Ռուսաստանից և Իրանից ներմուծվածը: Էներգետիկ ոլորտում համագործակցությունը առանցքային նշանակություն ունի թուրք-ադրբեջանական ռազմավարական գործընկերության ամրապնդման գործում: Թուրքիան ուղղակի մասնակցություն ունի Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների արտահանման բոլոր նախագծերում՝ սկսած Բաքու-Մուլասա նավթատարից (առաջին խոշոր նախագիծը, որն, ըստ էության, ադրբեջանական տնտեսության վերակենդանացման հիմքը դրեց ԽՍՀՄ փլուզումից հետո), մինչև Բաքու-Թբիլիսի-Չեյխան նավթատարն ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, ինչպես նաև համեմատաբար ավելի նոր՝ Տրանս-անատոլիական (TANAP) և Տրանս-ադրեատիկ գազատարների (TAP) նախագծերը: Առաջին հայացքից թվում է, թե ադրբեջանա-թուրքական նախաձեռնությամբ վերջին երկու խոշոր էներգետիկ նախագծերը շրջանցում են ոչ միայն Հայաստանին, այլ նաև Ռուսաստանին և Իրանին: Իրականում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ, քանի որ ոչ Ռուսաստանը և ոչ էլ Ադրբեջանը չեն բացառում ստեղծված ենթակառուցվածքներով Ադրբեջանի տարածքից ռուսական գազի տեղափոխում Թուրքիայի տարածք [10]: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նրա նկրտումներն այս ոլորտում վերաբերում են ոչ միայն Ադրբեջանի ածխաջրածնային ռեսուրսներն իր տարածքով դեպի Եվրոպա արտահանելու հեռանկարներին, այլ նաև մյուս թուրքական պետությունների հետ այդ ուղղությամբ համագործակցելը, մասնավորապես Ղազախստանի նավթը և Թուրքմենական բնական գազը ձևավորված ենթակառուցվածքներով Եվրոպա արտահանելու հեռանկարներին:

Նկատենք, որ Ադրբեջանի «էներգետիկ» ռազմավարությունը Վրաստանին «դիտարկում է» որպես կարևոր տարանցիկ պետություն, որը մասնակցում է վերը թվարկված բոլոր նախագծերին, բացի Տրանս-ադրեատիկ գազատարից: Նման քաղաքականությունը միտված է Վրաստանին կախվածության մեջ դնելու տարածաշրջանային խոշոր տնտեսական նախագծերից, որն ըստ անհրաժեշտության, կարող է օգտագործվել Հայաստանի դեմ: Առհասարակ Ադրբեջանը երբեք չի թաքցրել, որ իր «էներգետիկ ռազմավարության» հիմքում տնտե-

սական շահից բացի ընկած է նաև Հայաստանին տնտեսական շրջափակման մեջ պահելու ձգտումը և Հայաստանին Լեռնային Ղարաբաղի հարցում մեծ զիջումներ պարտադրելը:

Ադրբեջանը ձգտում է էներգետիկ ոլորտում համագործակցային ծրագրերն օգտագործել նաև ՀԱՊԿ անդամ որոշ պետությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով: Մասնավորապես, ընթացիկ տարվա սկզբին բավական ակտիվ շրջանառվում էր այն լուրը, որ Ռուսաստանի հետ գազի գնագոյացման շուրջ հաճախակի անհամաձայնությունների պատճառով Բելառուսը դիվերսիֆիկացնում է նավթի ներուծումը և այդ նպատակով այսուհետ նավթ է գնելու նաև Ադրբեջանից, ընդ որում՝ գնումներն իրականացվելու են Բաքու-Թբիլիսի-Չեյխան և Բաքու-Մուլասա ենթակառուցվածքներով: Միայն 2020 թվականին նախատեսվում է, որ Ադրբեջանը Բելառուսին է մատակարարելու մոտ 1 մլն տոննա նավթ (դրանից 300 հզ տոննա արդեն իսկ մատակարարվել է): Սա Ադրբեջանի և Բելառուսի միջև համագործակցության նոր հարթություն է, որը կարող է իր էական ազդեցությունն ունենալ նաև տարածաշրջանային անվտանգային միջավայրի փոփոխության վրա:

Փաստորեն, անվտանգային տեսանկյունից Ադրբեջանի «էներգետիկ» ռազմավարությունը Հայաստանի համար վտանգներ է ստեղծում ոչ միայն ՀԱՊԿ շրջանակներում երաշխավորված ռազմական աջակցություն չստանալու առումով, այլ նաև՝ հնարավոր պատերազմի դեպքում ԵՄ երկրներից որևէ քաղաքական աջակցություն չստանալու տեսանկյունից, քանի որ Ադրբեջանի հեռահար նպատակներում է նավթագազային մատակարարումներից որոշ կախվածության մեջ դնել նաև Եվրոպական որոշ երկրների:

Տրանսպորտային ենթակառուցվածքային ծրագրեր

Ադրբեջանի և Թուրքիայի քաղաքականությունը տրանսպորտային ենթակառուցվածքային նախագծերում անթաքույց միտված է Հայաստանին դնելու «երկրորդային շրջափակման» մեջ՝ դուրս թողնելով երկիրը բոլոր տեսակի միաջազգային նշանակության բեռնափոխադրումային ենթակառուցվածքներից: Բոլորովին վերջերս Հայաստանի համար ռազմավարական էր դիտվում «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցումը, որը պետք է էական դեր խաղար «Պարսից ծոց-Սև ծով» մուլտիմոդալ տրանսպորտային միջանցքը Չինաստանի «Մեկ գոտի և մեկ ուղի» նախաձեռնությանն ինտեգրելու հարցում: Սակայն Ղազվին-Ռեշտ-Աստարա երկաթգծի կառուցումից հետո ակնհայտ դարձավ, որ Հայաստանի «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղին չի կարող լուրջ այլընտրանք հանդիսանալ Չինաստանից ու Հնդկաստանից դեպի Եվրոպա բեռնափոխադրումների համար:

Թեև «Ղազվին-Ռեշտ-Աստարա» երկաթգիծը կառուցվել է «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի շրջանակներում, որը նախատեսում է Հնդկաստանի, Իրանի, Ադրբեջանի և Ռուսաստանի տրանսպորտային-հեռահաղորդակցական մագիստրալների ինտեգրում, այնուամենայնիվ ակնհայտ է, որ այն իր որոշիչ դերակատարումն է ունենալու նաև Հեռավոր Արևելքից դեպի Եվրոպա և Ռուսաստան բեռնափոխադրումների համար: Ադրբեջանի մեծ շահագրգռվածության մասին է վկայում այն, որ երկաթգծի Ռեշտ-Աստարա հատվածի կառուցման համար Ադրբեջանը Իրանին 500 մլն դոլար արտոնյալ վարկ է տրամադրել:

Այս երկաթգիծը փաստացի իրար է կապելու ԵԱՏՄ տնտեսական տարածքն Իրանի հետ: Հիշեցնենք, որ Իրանի և ԵԱՏՄ միջև ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագիր է կնքվել 2019 թվականի հոկտեմբերի 27-ին: Ստացվում է, որ թեև Ադրբեջանը փաստացի չի անդամակցում ԵԱՏՄ-ին, սակայն ԵԱՏՄ անդամ և գործընկեր պետությունների հետ (մասնավորապես Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Իրան) ավելի սերտ առևտրատնտեսական կապեր ունի, քանի այդ կառույցին անդամակցող Հայաստանը: Հատկանշական է, նաև որ ԵԱՏՄ անդամ-պետությունները նաև քաղաքականապես են աջակցում Ադրբեջանին, ինչի մասին բազմիցս նշել են թե Բելառուսի և թե Ղազախստանի պաշտոնական ներկայացուցիչները:

Հայաստանը շրջանցող մեկ այլ կարևոր միջազգային տրանսպորտային ենթակառուցվածք է նաև Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգիծը, որի բացումը հանդիսավոր կերպով իրականացվեց 2017 թվականին: Երկաթգծի կառուցման ծախսերը հավասարապես կիսել են Ադրբեջանը և Թուրքիան: Ադրբեջանն իր վրա է վերցրել Մառնեուլ-Ախալքալաք հատվածի կառուցումը, իսկ Վրաստանի տարածքով անցնող մնացած հատվածը ֆինանսավորել է արտոնյալ վարկով:

Գեոստրատեգիական առումով մեծ նշանակություն կարող է ունենալ Կարս-Նախիջևան երկաթգծի կառուցումը, որի շուրջ Ադրբեջանը և Թուրքիան արդեն կնքել են փոխըմբռնման հուշագիր: Այս երկաթգիծը կարող է էական դերակատարում ունենալ Նախիջևանի ինքնավար հանրապետության զարգացման համար, որի արդյունքում հնարավոր է Հայաստանի համար երրորդ ռազմական ճակատ բացվի: Մինչև վերջերս Նախիջևանը, որը երբեք ընդհանուր սահման չի ունեցել Ադրբեջանի հետ, բավարար ֆինանսական միջոցներ ու ռազմական ներուժ չունեին նման ճակատ դիտվելու համար: Դեռևս ապրիլյան պատերազմից հետո Ադրբեջանը Նախիջևանում աստիճանաբար

ռազմական տեխնիկա էր կուտակում՝ անմիջական վտանգ ստեղծելով Երևանի համար, քանի որ Նախիջևանի սահմանից մինչև Երևան ընդամենը 50 կմ է: Հայտնի է, որ Նախիջևանում տեղակայված Ադրբեջանական համագործակցության ռազմազինված բանակը վերջին տարիներին համալրվել է ժամանակակից սպառազինություններով, այդ թվում նաև՝ թուրքական արտադրության համազարկային կրակի ռեակտիվ համակարգերով (“TRG-300 Kaplan”): Ակնհայտ է, որ Թուրքիայի հեռահար նպատակներում է Նախիջևանում սեփական ռազմական բազայի ստեղծումը: Տավուշի սահմանին հուլիսյան թեժացումը վկայում է, որ Նախիջևանի կողմից երրորդ ճակատ նախաձեռնելու մասին կանխատեսումներն այնքան էլ անհիմն չեն:

Տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտում թուրք-ադրբեջանական համագործակցությունը, ճիշտ այնպես, ինչպես Էներգետիկ ոլորտում միտում ունի տնտեսական ծանրակշիռ շահերով իրար կապել եվրոպական, եվրասիական, միջինասիական և մերձավորարևելյան տարածաշրջանների բազմաթիվ երկրներ՝ միաժամանակ այդ երկրներում բարեկեցության մի որոշակի մաս պայմանավորելով թուրք-ադրբեջանական Էներգետիկ ու տրանսպորտային ենթակառուցվածքների անխափան աշխատանքով: Մասնավորապես, Ադրբեջանը բազմիցս ի ցույց է դրել այն հանգամանքը, որ ԵԱՏՄ անդամ-պետություններից յուրաքանչյուրի համար համագործակցությունը Ադրբեջանի հետ շատ ավելի շահավետ է, քան Հայաստանի հետ: Ցավալիորեն, թուրք-ադրբեջանական ինչպես Էներգետիկ, այնպես էլ տրանսպորտային խոշոր նախագծերի վրա ներազդելու լծակներ Հայաստանը չունի: Նոր պաշտպանական ռազմավարությունը պետք է մշակվի պարզապես այս հանգամանքները և ստեղծված իրողությունները հաշվի առնելով:

Հատկանշական է, որ ադրբեջանական Թժվուզի շրջանին հարող Հայաստանի հետ սահմանը մեծ կարևորություն ունի հատկապես այն պատճառով, որ գործնականում այդ տարածքով է անցնում երկրի նավթազագային ենթակառուցվածքների մեծ մասը, ինչպես նաև՝ միջազգային նշանակության տրանսպորտային ենթակառուցվածքները:

Համագործակցությունը բարձրտեխնոլոգիական ոլորտում

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունում մրցունակության կարևորագույն չափանիշը նորարարական և բարձրտեխնոլոգիական արտադրությունների առկայությունն է և (կամ) դրանց նախաձեռնելու հնարավորությունը երկրում: Թերևս հենց այդ պատճառով է, որ թե Ադրբեջանում և թե Թուրքիայում բարձրտեխնոլոգիական ոլորտի զարգացումը տնտե-

սական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է, ընդ որում, բազմիցս երկուստեք շեշտվել է այս ոլորտում երկու երկրների միջև խորը համագործակցության անհրաժեշտությունը [5]: Հայտնի է, որ ներկայում Թուրքիան տարածաշրջանում (ինչու չէ նաև՝ աշխարհում) բարձրտեխնոլոգիական արտադրանք թողարկող խոշոր պետությունն է, որը բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանման վարկանիշային ցուցանիշով աշխարհում 35-րդ պետությունն է: Այնուհաստի, ադրբեջանաթուրքական համագործակցությունն այս ոլորտում նպատակ ունի կրճատել երկու երկրների միջև առկա տեխնոլոգիական խզումը, իսկ Ադրբեջանի վերջնականատակն այս տեսանկյունից «Սինգապուրին հասնելն ու անցնելն է արհեստական բանականության ոլորտում»: Ծշմարտության առաջ չմեղանչելու համար, պիտի ասենք, որ տարածաշրջանի երկրներից նման հավակնություններն առավել իրատեսական են հենց Ադրբեջանի համար, որը Oxford Insights-ի տվյալներով արհեստական բանականության ոլորտի զարգացման ինդեքսով աշխարհում զբաղեցնում է 64-րդ տեղը՝ նկատելիորեն առաջ անցնելով տարածաշրջանի այլ երկրներից՝ Իրանից (71-րդ), Վրաստանից (74-րդ), Հայաստանից (81-րդ):

Ադրբեջանի համար տնտեսության զարգացման նորարարական ուղին կարևորվում է, քանի որ այս պետության ղեկավարությունը հատակ գիտակցում է, որ աճի ապահովման համար անհրաժեշտ է չվերականգնվող բնական հարստություն են հյուժման մեծ արագությամբ, ուստի, պետությունը վաղ թե ուշ կանգնելու է ոչ նավթային ոլորտի զարգացման խնդրի առաջ, իսկ նորարարական ոլորտները (մասնավորապես՝ տեղեկատվա-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտը) դրսևորում են աճի ամենաարագ տեմպերը:

Ներկայում Ադրբեջանը հսկայածավալ ներդրումներ է իրականացնում բարձրտեխնոլոգիական ոլորտում մի քանի մեգանախագծերի իրականացման և զարգացման համար: Խոսքը մասնավորապես վերաբերում է Տրանսեվրասիական գերինֆորմացիոն մագիստրալի (TASIM) և Եվրասիական հեռահաղորդակցական ալյանսի (EuraCA) նախագծերին: TASIM-ը ենթադրում է կապի նոր տարանցիկ գծի ստեղծում Հոնկոնգից մինչև Ֆրանկֆուրտ՝ նպատակ ունենալով միավորել Եվրոպայի և Ասիայի ինֆորմացիայի փոխանակման խոշոր կենտրոններին: Այն անցնելու է Ադրբեջանի, Թուրքիայի, Վրաստանի, Չինաստանի, Ղազախստանի տարածքներով և հասնելու է մինչև Գերմանիա: TASIM մագիստրալի երկարությունը կկազմի 11000 կմ, իսկ ցանցի նախասկզբնական թողունակությունը կկազմի 2

ՏԲտ/վ, որը կծածկի Եվրասիայից մինչև Արևմտ. Եվրոպա և Խաղաղօվկիանոսյան երկրներ գոյություն ունեցող պահանջմունքները: Իսկ EuraCA-ի հիմնական նպատակը ցանցային ենթակառուցվածքների ընդլայնումն է՝ ապահովելու համար TASIM նախագծին որակյալ և հասանելի միացում, այդ նախագծի արագ իրականացում [12]: Թեև նախագիծն իրականացվում է Ադրբեջանի նախաձեռնությամբ, դրա հիմնական շահառուներ են համարվում Թյուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդին անդամակցող պետությունները, մասնավորապես Թուրքիան, որը նաև իր ակտիվ մասնակցությունն է բերում այդ նախագծին, թե խորհրդատվական և թե ֆինանսավորման տեսանկյունից:

TASIM նախագծի շրջանակներում 2019 թվականի դեկտեմբերին Ադրբեջանի և Ղազախստանի վարչապետերը հայտարարեցին Կասպից ծովի հատակով նոր Օպտիկա-մանրաթելային հաղորդակցական գծի կառուցման մասին: Սա թույլ կտա դուրս գալ տվյալների փոխանակության գերարագ և ավելի պաշտպանված փոխանակության հարթություն: 100 մլն դոլարանոց նախագծի ծախսերը երկու պետությունները հավասարաչափ կկիսեն:

Ադրբեջանն ակտիվորեն համագործակցում է Թուրքիայի հետ նաև բարձրտեխնոլոգիական այլ ոլորտներում, մասնավորապես տիեզերական արդյունաբերության ոլորտում: Ադրբեջանն արդեն կարողացել է տիեզերք ուղարկել երեք արբանյակը՝ «Azerspace-1» հեռահաղորդակցական արբանյակը (2013 թվականի փետրվարին), որի հնարավորությունների 80%-ն Ադրբեջանն արտահանում է, «SPOT 7/Azersky» օպտիկական արբանյակը, որը հնարավորություն է տալիս Երկրի վրա մեծ ճշգրտությամբ դիտարկումներ կատարել, «Azerspace-2», որը գործարկվել է 2018 թվականին՝ ընդլայնելով ծառայությունների սպեկտրը և ծածկույթը: Այդ արբանյակների կառավարման համար Ադրբեջանում ստեղծվել է տարածաշրջանային կառավարման կենտրոն, որը հնարավորություն է տալիս միաժամանակ կառավարել նաև տարածաշրջանի տիեզերական տարածքում գտնվող այլ արբանյակներ [11]: Այս ոլորտի զարգացումը Ադրբեջանին հնարավորություն է տալիս ինֆորմացիայի փոխանակման ժամանակ նվազեցնել կախվածությունն այլ երկրներից, նոր թափ հաղորդել երկրում մարդկային կապիտալի և մտավոր ներուժի զարգացմանը, տնտեսության նորարարական զարգացմանը և կրում է ռազմավարական բնույթ:

Այնուհաստ է, որ ապագայում Ադրբեջանի տնտեսական քաղաքականության և արդիականացման հիմնական ուղղությունն անշեղորեն

կապված է տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հետ, որի զարգացման դինամիկայով վերջին մի քանի տարիներին Ադրբեջանն առաջատար դիրքեր ունի ԱՊՀ-ում: Որպես այս ոլորտում Ադրբեջանի հաջողությունների պարզ վկայություն, նկատենք, որ 2022 թվականին Ադրբեջանում է անցկացվելու Միջազգային Աերոտիեզերական կոնգրեսը, որը բարձր մակարդակի գիտական ու գործարար համաժողով է, որն անցկացվում է ամեն տարի սկսած 1950 թվականից:

Աերոտիեզերական տարածքում գերակայության հասնելը պատերազմող երկրի համար մեծ մարտահրավեր է նրա հակառակորդ համարվող երկրի համար: Մասնավորապես տիեզերքից հետախուզական արդյունավետ գործողությունները՝ արհեստական բանականության տեխնոլոգիաների շնորհիվ, կարող են էական վտանգ պարունակել երկրի անվտանգության համար:

Համագործակցությունը ռազմարդյունաբերության ոլորտում

Տարածաշրջանում անվտանգային իրավիճակի զարգացումների տեսանկյունից հատուկ կարևորություն ունի համագործակցությունը ռազմարդյունաբերության ոլորտում: Ակնհայտ է, որ թուրք-ադրբեջանական երկուստեք նպատակահարմար հարաբերությունների խորացումն ընդհուպ մինչև «ռազմավարական» ուն(եր)ի նաև հստակ աշխարհաքաղաքական հիմնապատճառներ թե Թուրքիայի և թե Ադրբեջանի համար: Թուրքիայի տեսանկյունից դրանք հանգում են հետևյալին. սահմանափակել Ռուսաստանի աճող ազդեցությունը տարածաշրջանում, նվազեցնել Իրանի խլամական քարոզչության ազդեցությունն Ադրբեջանում, խորացնել ազգային-էթնիկ կապերն Ադրբեջանի հետ, ինչը լրացուցիչ հնարավորություն կտա տնտեսական մեծ շահավետություն ստանալու այդ երկրի աժխաջրածնային ռեսուրսների շահագործումից [1]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա Թուրքիան, ըստ էության, այն խարիսխն էր, որի վրա Ադրբեջանը փորձեց կառուցել հայ-ադրբեջանական պատերազմում «պարտված» երկրի ապագան, երբեմն նույնիսկ վիճելի հարցադրում առաջադրելով, թե արդյո՞ք ինչն ավելի մեծ դեր խաղաց հետպատերազմյան Ադրբեջանի զարգացման համար՝ աժխաջրածնային հարուստ պաշարները, թե Թուրքիայի հետ բարեկամական գործընկերությունը: Թուրքիան՝ Ադրբեջանին իր բազմակողմանի աջակցությամբ շարունակելու է իր որոշիչ ազդեցությունն ունենալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում:

Անցած երկու տասնամյակում Ադրբեջանին հաջողվել է հսկայական ֆինանսական միջոցներ կենտրոնացրել ռազմարդյունաբերական բազան

արդիականացնելու և զարգացնելու ուղղությամբ: Նավթային եկամուտների աճը հնարավորություն է տվել Ադրբեջանին մոտ քսան անգամ ավելացնել ռազմական ծախսերը: Առավել հզոր և նորարարական ռազմական ուժեր ունենալու նպատակին զուգահեռ Ադրբեջանը նպատակադրել է ունենալ սեփական մրցունակ ռազմաարդյունաբերություն: Ընդ որում, այս հարցում նույնպես Ադրբեջանի հիմնական հենարանը եղել է Թուրքիան:

Ըստ ռազմաարդյունաբերության նախարար Ջամալովի, 2007-2016 թթ ընթացում ռազմաարդյունաբերությունը Ադրբեջանում աճել է մոտ 40 անգամ: Ընդ որում, ներքին պաշտպանական ոլորտում ձեռքբերումները հնարավորություն են տվել այս երկրին համաշխարհային շուկայում ձևավորել սպառազինություններ արտադրողի հեղինակություն: Ներկայում Ադրբեջանը ռազմաարդյունաբերական արտադրանք է արտահանում մոտ 10 երկիր, այդ թվում՝ Թուրքիա, Իսրայել, Վրաստան, Իրան, Պակիստան և Հորդանան: Դիվերսիֆիկացնելով իր սպառազինություններն արդեն հնացող խորհրդային տեխնիկայից, Ադրբեջանը վերջին տարիներին անցում կատարեց «գնորդ-վաճառող հարաբերություններից» գործընկեր երկրների հետ համատեղ զարգացման և համատեղ արտադրությունների կազմակերպման փուլ: Այդ նպատակով Ադրբեջանում արդեն բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ են ստեղծվել արտասահմանյան ընկերությունների հետ: Այսպես օրինակ, 2009 թվականին թուրքական «Ռոկետտան» ռազմաարդյունաբերական ընկերությունը և ադրբեջանական «Իզիմ» ռազմա-գիտական ձեռնարկությունը համաձայնագիր ստորագրեցին՝ նոր հրթիռակայանների արտադրության համար: Հարցազրույցներից մեկի ժամանակ Ջամալովի ավագ խորհրդական Մամեդովը հայտարարել էր, որ իր ղեկավարած բաժինը ներկայում աշխատում է հեռահար հրթիռների նոր կայանների մշակման վրա, որոնք շահագործման են հանձնվելու 2020 թվականին: 2017 թվականի հոկտեմբերին Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստորագրվեց ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության նոր համաձայնագիր, որը հայտարարվեց որպես հիմնարար բաղադրիչ պաշտպանական ոլորտում երկու երկրների միջև առավել լայն՝ ինստիտուցիոնալ մակարդակում համագործակցության համար:

Այս ոլորտում համագործակցության ամենանոր պայմանագիրը կնքվել է 2018 թ. սեպտեմբերի 25-ին Թուրքական աերոտիեզերական արդյունաբերության (Turkish Aerospace Industries) և Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի միջև, որը նպատակ ունի միավորել ու ուղղորդել երկու երկրների ջանքերը

Օգտագործված գրականության ցանկ

պաշտպանության և ավիացիայի ոլորտում: Այս նոր համաձայնագրի գլխավոր մարտահրավերներից մեկը համատեղ հետազոտությունների և մշակումների իրականացումն է, տեխնոլոգիաների միմյանց փոխանցումը, ինչպես նաև՝ նորարարական գաղափարների փոխանակությունը և համատեղ իրագործումը: Թուրքական կողմի հավաստմամբ, նրանք ցանկանում են Ադրբեջանի հետ կիսել ատերտիեզերական ոլորտում իրենց ունեցած ձեռքբերումները, փորձը, որակական արտադրության հնարավորությունները: Այս ընկերությունը ADEX-2018-ում ներկայացրել է ռազմարդյունաբերական լայն տեսականի՝ TF-X ինքնաթիռներ, HÜRKUŞ վարժասարքեր, անօդաչու թռչող սարքեր, T625 բազմա-ֆունկցիոնալ ինքնաթիռներ, ինչպես նաև՝ GÖKTÜRK-1 և Türksat 6A արբանյակներ [3]: Թուրքական ռազմարդյունաբերությունն, ընդհանուր առմամբ, վերջին տարիներին կարողացել է նկատելի առաջընթաց գրանցել հատկապես բարձրտեխնոլոգիական սպառազինությունների արտադրության ոլորտում: Ներկայում որպես դրա կարկառուն օրինակ, հաճախ է ներկայացվում Իդիքում արհեստական բանականությամբ հազեցած թուրքական անօդաչու թռչող սարքերի միջոցով իրականացված գործողությունը, որը արդյունավետ է գտնվել ռուսական հակաօդային պաշտպանության համակարգերի դեմ պայքարում: Ադրբեջանական փորձագիտական շրջանակները կանխատեսում են, որ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանը նույնպիսի հաջող գործողություններ կարող է իրականացնել նաև Արցախյան հակամարտության ժամանակ:

Հաշվի առնելով ռազմական ոլորտում հետազոտություններին ու մշակումներին Ադրբեջանի կողմից հատկացվող հսկայածավալ ֆինանսական միջոցները, արդեն իսկ ձևավորված ենթակառուցվածքներն ու միջազգային համագործակցային կապերը ռազմարդյունաբերական ոլորտում առաջատարների հետ, ատերտիեզերական ոլորտում ձեռքբերված հաջողությունները ոչ հեռավոր ապագայում ակնկալվում է, որ Ադրբեջանը կունենա սեփական զարգացած ռազմարդյունաբերություն՝ որը Հայաստանի անվտանգությանը ևս մի լուրջ սպառնալիք է: Ներկայում և մոտ ապագայում Հայաստանի համար գերխնդիր է լինելու քիչ թե շատ համարժեքության պահպանումը, ինչը հնարավոր կլինի առաջին հերթին «խելացի ռազմարդյունաբերության» զարգացման ճանապարհով, որը նվազ նյութատար է, գիտատար և քիչ ծախսատար:

1. **Houman S.** “Elements of Azerbaijan Foreign Policy”, Journal of Third World Studies, 2003, Vol. 20, No. 1, p. 179-92.
2. **Şaban K. and Fatih M.,** “Turkey-Azerbaijan Relations: The Economic Dimension”, Journal of Caspian Affairs, Vol. I, No. 1, (Spring 2015), pp. 23 – 46.
3. Turkey, Azerbaijan to cooperate in defense, aviation. <http://www.hurriyetdailynews.com/turkey-azerbaijan-to-cooperate-in-defense-aviation-137253>
4. S&P подтвердил рейтинги Азербайджана на уровне ВВ+/В, прогноз – стабильный. Источник: <http://interfax.az/view/808653>
5. Азербайджан и Турция обсудили сотрудничество в сфере высоких технологий; 1 мая 2014, <https://news.day.az/economy/495087.html>
6. Азербайджанская экономика сильно страдает от глобальной пандемии — интервью. Источник: <https://eadaily.com/ru/news/2020/07/01/azerbaydzha-nskaya-ekonomika-silno-stradaet-ot-globalnoy-pandemii-intervyu>
7. Азербайджану в 2020 году грозит дефицит счета текущих операций. Источник: <http://www.turan.az/ext/news/2020/4/free/analytics/ru/123600.htm>
8. Баку от "разморозки" цен на нефть не пострадает, но выдержат ли другие страны? Источник: <https://az.sputniknews.ru/economy/20200307/423354577/azerbaijan-sebestoimost-dobycha-nefti-o.html>
9. Ежедневные потери экономики Азербайджана из-за коронавируса оцениваются в \$70-88 млн. Источник: <https://interfax.az/view/800558>
10. Нефтегазовая отрасль Азербайджана и отношения с Россией. <http://geoenergetics.ru/2020/03/10/neftegazovaya-otrasl-azerbajdzhana-i-otnosheniya-s-rossiej/>
11. Первый телекоммуникационный спутник Азербайджана «Azerspace-1» сегодня будет выведен на орбиту. https://azertag.az/ru/xeber/Pervyi_telekommunikacionnyi_sputnik_Azerbaidzha_na_Azerspace_1_segodnya_budet_vyveden_na_orbitu-100763
12. Сотрудничество АР и Турции в сфере высоких технологий. <http://vzglyad.az/news/19290/> Сотрудничество-АР-и-Турции-в-сфере-высоких-технологий.html
13. **Шустов А.,** Коронавирус повысит уровень бедности в Средней Азии. Источник: <https://www.ritmeurasia.org/news--2020-07-09--koronavirus-povysit-uroven-bednosti-v-srednej-azii-49851>

*Տճանա/Հանձնվել է՝ 25.10.2020
 Рецензирована/Չրախտավել է՝ 10.11.2020
 Принята/Ընդունվել է՝ 15.11.2020*